Հաստատում եմ

տնօրեն՝ _____ Հ.Կոստանյան

«31» 08 2023թ.

Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

Հովհաննես Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

4-րդ «Դ» դասարան

Վահանյան Կարինե Հովհաննեսի

«2023-2024» ուսումնական տարի

Ուսումնադաստիարակչական աշխատանքների
հիմնական բովանդակությունը

Ուսում-նական շաբաթներ	Ուսումնադաստիրակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	Գիտելիքի օր	սեպտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
2	Դասարանի աշակերտական խորհրդի ընտրություն	սեպտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
3	Դասարանի ավագի օգնականների ընտրություն, հերթապահության սահմանում	սեպտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
4	Էքսկուրսիա դեպի գրադարան	սեպտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
5	Դասասենյակի կահավորում «Գարուն» խորագրով	սեպտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
6	Զրույց ընկերության, հավատարմության մասին	հոկտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
7	«Հայրենի՛ք, տուն ու բույն իմ»	հոկտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
8	Առակների վերլուծություն, քննարկում	հոկտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
9	«Օտար մշակույթ» թեմայով զրույց	նոյեմբեր	ուսուցիչ, աշակերտ
10	«Մեր մոլորակի տեղը տիեզերքում»	նոյեմբեր	ուսուցիչ, աշակերտ
11	«Բնություն» թեմայով զրույց	նոյեմբեր	ուսուցիչ, աշակերտ
12	Մարդու ազդեցությունը բնության վրա	նոյեմբեր	ուսուցիչ, աշակերտ
13	«Մեր շրջապատը» թեմայով զրույց	դեկտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
14	Կահավորման պարագաների նախապատրաստում	դեկտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
15	Դասադենյակի կահավորում «Ամանոր» խորագրով	դեկտեմբեր	ուսուցիչ, աշակերտ
16	Ամանորյա հրաշքներ	հունվար	ուսուցիչ, աշակերտ
17	Աշխարհի հրաշալիքները	հունվար	ուսուցիչ, աշակերտ
18	Էքսկուրսիա դեպի «Զմեռային այգի»	հունվար	ուսուցիչ, աշակերտ
19	Էքսկուրսիային ստացած տպավորությունների քննարկում	փետրվար	ուսուցիչ, աշակերտ
20	Կամզակերպչական-դաստիարակչական հարցերի քննարկում	փետրվար	ուսուցիչ, աշակերտ
21	Զրույց միջավայրի կահավորման մասին	փետրվար	ուսուցիչ, աշակերտ
22	Կահավորման պարագաների նախապատրաստում	փետրվար	ուսուցիչ, աշակերտ
23	Դասասենյակի կահավորում «Բարև Գարուն» խորագրով	մարտ	ուսուցիչ, աշակերտ
24	Գարնանային զրույցներ	մարտ	ուսուցիչ, աշակերտ
25	Էքսկուրսիա դեպի «Պլանետարիում»	մարտ	ուսուցիչ, աշակերտ
26	Զրույց մայրության մասին	մարտ	ուսուցիչ, աշակերտ
27	Մայրիկս այնքա՛ն նման է գարնանը	ապրիլ	ուսուցիչ, աշակերտ
28	Բնությունն ու մենք	ապրիլ	ուսուցիչ, աշակերտ
29	Կազմակերպչական հարցերի քննարկում	ապրիլ	ուսուցիչ, աշակերտ
30	Հաղթանակների ամիս	մայիս	ուսուցիչ, աշակերտ
31	Էքսկուրսիա դեպի «Հուշարձան»	մայիս	ուսուցիչ, աշակերտ
32	Հայոց մշակույթն ու հայրենասիրությունը	մայիս	ուսուցիչ, աշակերտ
33	Ուսումնական տարվա ամփոփում	մայիս	ուսուցիչ, աշակերտ
34	Քննական շրջանի ամփոփում	հունիս	ուսուցիչ, աշակերտ

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ***Ներածություն*** (դասարանը ընդհանուր բնութագիրը): Դասարանը բաղկացած է 28 աշակերտից (14 տղա, 14 աղջիկ): Ընդհանուր առմամբ աշակերտներն ունեն բավարար ընդունակություններ: Կան գերազանց, հարվածային սովորող աշակերտներ: Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին, ցուցաբերում են ակտիվություն, համախմբված են, ընկերասեր ու հոգատար միմյանց նկատմամբ: Դասարանում կան դժվաչ դաստիարակվող 4 աշակերտ:
2. ***Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուսումնական տարվա ընթացքում:*** Ուսումնական-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն):

3. Հայեցի դաստիարակություն:

3.1 **Հոգևոր դաստիարակություն:** Այս նպատակով կազմակերպել էկսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 **Գեղագիտական դաստիարակություն**: Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն:** Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Նշել մի շարք ֆիդայիների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն:** Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն**: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 **Բնապահպանական դաստիարակություն:** Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

4. ***Դպրոց-ընտանիք կապը:*** Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն: